



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Ի. Ք. Ա. Ղ. Ա. Ք. Ա. Կ. Ա. Ն.

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 2 ՄԱՅԻՍ 1887

ԹԻԻ 3871

ՄԱՅԻՍ ԿՐ իրատարակ- ունի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժա- նորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դրշ. եւ օտար երկրաց համար 15 ֆը- րանք: Բաժանորդագները դրկելու է առ մատակարարութիւն Սրեւելքի եւ Սա- սիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկ- եան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Ա. Ազգային (Կարճ Կարճ Կարճ) Խորհրդարանին շուրջը Ս. ՅՈՎ. ՆԱՄԱԿ Մոսկուայէն Բ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆ Ս. Էջմիածին Ղ. Պ. ՆԱՄԱԿ Ս. Գաւառական Բանաս- տեղծութիւն ՊԼԱՏՈՆ ԶՈՒՐԱՎ Ղարաբաղի աստղագէտը (ՌՈՒՍԿԻ ԿՈՒՐԻԵՐ) Երմտական վիճակ Թուսիոյ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՌԻԲԱԹ 1 ՄԱՅԻՍ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՆԻՒԼ

Բաւական ժամանակէ ի վեր Ազգ. Ժողովոյ նիստերէն վերջ երեսփոխանք տխրութեամբ կը մեկնին ժողովարա- նէն: «Դարձեալ օրինազանցութիւն մը, դարձեալ ճարտարութիւն մը ա- տենապետին կողմանէ» ըսելով. Եւ տխրելու իրաւունք ունին ամէն ա- նոնք, ոյք Սահմանադրութեան ճշմա- րիտ բարեկամներ, գիտեն թէ սահմա- նադրական ժողով մը իւր ոյժն ու գո- յութիւնը կը պարտի նախ եւ առաջ օրինապահութեան: Այս տարրական ճշմարտութիւնը մոռցած է ատենա- պետ Էֆ. Ն., մոռնալով միանգամայն այն բարձր պարտականութիւններն զոր ու- նի հանդէպ ժողովին, հանդէպ իւրա- քանչիւր երեսփոխանի, Խղճահարու- թիւն չունի օրէնքն ոտնակոխ ընելու եւ մոռնալով՝ նպատակի մը յաջո- ղութեան համար: Ազգ. Ժողովը կը կառավարուի այժմ ապօրէն միջոցնե- րով, եւ սակայն ի գործ դրուած ա- մէն ապօրէն միջոց բռնաբարութիւն

կը համարուի, եւ բռնաբարութիւն մը միշտ նիւթական եւ բարոյական տկա- րութեան մը ակնբերեւ նշանն է եւ քայքայման անխուսափելի նախագու- չակն:

Ազգ. Ժողովոյ ապրիլ 24 ի նիստն օրինազանցութեան կատարեալ նիստ մը կրնայ համարուիլ:

Նախ եւ առաջ կատարեալ օրինա- ղանցութիւն էր Ազգ. Ժողովոյ նստին այնքան երկար ժամանակ յետաձգու- մը: Մարտի 20ին Ազգ. Ժողովն ինիստ հրաւիրուած էր Պատրիարքի հրա- ժարականին վրայ խորհելու համար, սակայն օրինական մեծամասնութիւն չգոյանալով նիստն յետաձգուեցաւ, ի հարկէ յաջորդ չաբաթը գումարուելու պայմանաւ, ինչպէս կը տրամադրէ ներ- քին կանոնագրի 53րդ յօդուածն:

«Ամէն անբաւական նստի հետեւեալ նիստն ութ օրէն գումարել իրաւունք է եւ պարտիք»:

Ատենապետը պարտական էր ա- ռանց. ո՛ր եւ է նկատողութեան գործա- դրել այս յօդուածը: Բայց չուզեց. Ին- չո՛ւ: Ինչ որ ալ լինի պատասխանն, օ- րինազանցութիւնը կայ եւ կը մնայ:

Մարտ 20ին նստին օրակարգի ա- ռաջին խնդիրն էր Պատրիարքի հրա- ժարականն. այսպէս գրուած էր հրա- լիրագրերուն. մէջ եւ սակայն ապրիլ 24ին հրաւիրագրերու մէջ կցուած էր Պատրիարքի հրաժարականին նաեւ «Տե- ղեկագիր Ատենապետաց Դիւանի» եւ այդ տեղեկագիրն հակառակ երեսփո- խանաց ոմանց բողոքներու կարգաց- ուեցաւ Ազգ. Ժողովոյ մէջ: Դարձեալ օրինազանցութիւն, եւ կրկնակի օրի- նազանցութիւն:

Ահանասիկ ներքին կանոնագրի տրամա- դրութիւնք:

80Դ. 15. Դիւանաց ատենապետները կրնան միանալ առժամայէս եւ Ատենա- նապետաց Դիւան կազմել՝ որ եւ Համա- դո. մար Դիւան կըսվի, ազգային խիստ կարեւոր կամ յարաբերական ծանր խնդրի մը նախաքննութեանը համար:

Ժողովը Կ. Պոլսէ համագումար Դիւանի պէտքը, եւ Մ. Դիւանին ատենապետը, դա- նի կը գումարէ իր նախագահութեամբ:

80Դ. 87. Եթէ Պատրիարք Սրբազանը չիւր հրաժարականը տայ, պատճառա- բանեալ պէտք է ըլլայ այդ հրաժարա- գիրը. Ժողովն՝ յետ քննութեան Ատենապե- տաց Դիւանին նախաքննութեանը կը յանձ- նէ հրաժարագիրը, եւ այս դիւանին եզ- րակացութեանը վրայ՝ պատճառները քննե- լով՝ կ'ընդունի կամ չընդունիր առաջարկ-

եալ հրաժարումն: Եթէ չընդունի, պատ- ճառաբանեալ կը հաղորդէ զիւր որոշումը՝ Պատրիարք Սրբազանին, որում միայն կը մնայ որոշել իւր ընելիքն»:

Արդ, անցեալ ժողովին բոլոր այս օրէնքներն ոտնակոխ եղած էին, որպէս յայտարարեցին Դուրդէն եւ Պուլիուր- եան Էֆէնտիք: Բայց ատենապետ Էֆ. յայտարարելով թէ իւր արդարացումը պիտի լսուի ներկայացուած տեղեկա- գրին մէջ, ժողովը թոյլատրեց այդ ա- պօրէն տեղեկագրի ընթերցումն, եւ սակայն տեղեկագրի մէջ ոչ մի բառ կար որ կարենար արդարացնել Ատենա- պետ Էֆ. ի եւ իւր պաշտօնակցաց ա- պօրէն ընթացքը:

Բայց այսքանը բաւ չէր. ատենա- պետ Էֆ. 22 քուէները բաւական հա- մարեց Պատրիարքին պատգամաւորու- թիւն մը ղրկելու համար: Երեսփո- խանք 51 էին, որոց մի քանին եթէ վերջէն եկան, գէթ 22էն աւելի կային այդ քուէարկութեան չմասնակցող կամ հակառակ քուէ տուող: Իսկ քը- լէարկութեան այն պայմաններն որք պիտի ապահովեն թէ 22 քուէն 24 չարձանագրուիր, այդ օրէնքները բնաւ չյարգուեցան ինչպէս եւ միշտ:

Չենք կարծեր որ ըսուի թէ «բժա- խնդրութիւններ են ասոնք, Կ. Պոլսէն» Է, գործ տեսնելու է: Գործնա- կան լինելու առաջին պայմանն օրինա- ղանցութիւնը չէ. եթէ այդպէս լինէր, բնաւ օրէնք չունենալն աւելի գործ- նական կը լինէր:

Ազգային գործոց գլուխ եղողներն եւ Մէրեթ-գուլի Էֆ. միասին այնպէս համոզուած են թէ Ազգ. Ժողովէն օգ- տակար — իրենց տեսակէտով — որո- չում մը կորցելու համար պէտք է վար- պետութեանց դիմել. սակայն թող ներուի ըսել թէ Ազգ. Ժողովն իւր մէջ կը պարունակէ բաւական թուով խե- լաճաս, խոհական, ազգասէր երեսփո- խաններ որք կարօտ չեն վերին հսկո- ղութեան մը խնամոց: Եւ սակայն այդ երեսփոխանք հետզհետէ դառն զըզ- ուանք մը կ'զգան:

Դարմանը պարզ է: Ազգ. Ժողովն յաջորդ նստին նոր դիւան մը պիտի ընտրէ. պէտք է ատենապետ ընտրուի մի այնպիսի անձ որ Ազգ. Ժողովոյ ա- տենապետութեան պաշտօնը իբր բար- ձր պարտականութիւն մը նկատէ եւ ոչ թէ դեր մը:

Ա. Ա.

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՇՈՒՐՋԸ

O le soleil, le beau soleil
Qui fait dans le jardin tout riant et vermeil!

Այո՛, այդ պայծառ արեւն էր որ Ուրբաթ առաւօտ Ապրիլ 24ին լոյսով կ'ողողէր գեղածիծաղ վառ բնութիւնն, եւ հայ երեսփոխանը առանց տեղատարաւի մը երկիւղին կրնային դիմել ի Գում-գարուն:

Ժամը դեռ երեք չէ եւ արդէն «ժողովուրդի զաւակներն» անհամբեր կը դեղեկին Պատրիարքարանի, Մայր եկեղեցւոյ շուրջն: Հրաւիրողներն ատենանի բացումը ժամը չէլէ՛ չէին կը հաղորդեն: Երեքը շատոնց անցած է եւ տակաւին տեարք երեսփոխանը չեն երեւիր ի խորհրդարան: Ճշդ ապահովութիւնն, որ թագաւորաց քաղաքավարութիւնն է, բնական է որ Ազգային Ժողովոյ ալ անքաղաքավարութիւնն համարուելի Մօտ ժամը 4ին Պատրիարքարանի մէկ պատահանէն կը լուսի խոշոր զանգակի մը հնչիւնը նման այն զանգակներուն ոյք զիւղերու ոյանդակներէն սեղանի հրաւէր կը կարգան եւ լսելի կը լինին մինչեւ հեռաւոր փողոցներն: Ի ձայն զանգակին երեսփոխանը կը մտնեն յեկեղեցի եւ ներկայութեան տետրն ստորագրելու արարողութիւնը կ'սկսի: Տեսարանը բաւական հետաքրքրական է: Քանի՛ քանի երեսփոխաններ իրենց կենաց մէջ այդ օրը միայն անունին գրելու եւ գրուած տեսնելու անձառելի բերկրութիւնը կը վայելեն: Շատերը գրիչն ի ձեռին մի քանի վայրկեան զմայլած կը նային իրենց անուններուն: Այո՛, իրենք են: Ուր ուրեմն Ատենապետ էֆէնտին կը զարնէ զանգակ մը, բայց ո՛չ փետր: Յի նշանաւոր զանգակն, որ իւր չարաբաստիկ դատաւարութեամբ է, այլ ուրիշ զանգակ մը, շատ փոքրիկ՝ նման անոնց զորս սովորաբար կը կախեն Աստուծոյ ուրիշ արարածներու վըզերէն:

Երեսփոխան էֆէնտի իրենց գիրենց կը նետեն կեղտոտ, ծուռ մուռ, չոր փայտէ նստարաններու նմանող բաներու վրայ: The right man in the right place. «Յարմար մարդն յարմարագոյն տեղը»: Թափուր է պատրիարքական աթոռը, բայց ո՛չ սեւ քողով ծածկուած: Թափուր եւ Կրօնական Ժողովականաց աթոռները, թափուր Քաղաքական Ժողովականաց աթոռներն: Եւ ի՞նչ հարկ որ այդ աթոռներն ունենան իրենց բազմականներն: Ո՛չ ապաքէն անդ է Նուրեան էֆէնտի: Կրօնական եւ Քաղաքական Ժողովականը Նուրեան էֆէնտի կամ համաձայն պիտի լինին կամ անհամաձայն: առաջին պարագային մէջ իրենց ներկայութիւնն աւելորդ է, երկրորդ պարագային մէջ փաստակար:

Դիւանի վրայ մարմին մը միայն կը տեսնուի, գլուխն աննշմարելի է: Ատենապետ էֆէնտին այնքան կախած է իւր այդ զըլուխը մինչ զայն տեսնելը դժուարին: Կարծես կանանչ կապերտին վրայ գրեթէ գրուած են, գրեթէ ոյք կը պատկերացնեն ինչ որ Քրիստոս ըսաւ թէ ամէն օր իւր առաջը նայի եւ գրուած կը տեսնէ:

Ատենապետը աթոռին վրայ նստած է եղիպտական մովիա մը, Տամատեան էֆէնտի:

Ո՛չ մի եպիսկոպոս կայ, ո՛վ պիտի նախագահէ: Ո՛վ պիտի օրհնէ երեսփոխանաց դործերը: Բայց կ'արօ՞տ են օրհնէնքի: Անշուշտ: Ո՛չ ապաքէն շատ քրիստոնեայններ

նախ կը խաչակնքեն երեսնին եւ ապա դաշոյնը կը մխեն: Եւ միթէ չկա՞ն հայ երեսփոխանը որ իւրաքանչիւր նստին կուգան ազգին կողմ դաշոյն մը մխելու: Դժուարութիւն չկայ գտնել օրհնատու մը: Ատենապետ էֆէնտին կը հրամայէ բարապանի մը երթալ նախագահ եպիսկոպոս մը բերել Կէֆօզլէօն: Եւ բարապանը կ'երթայ ուղղակի յերուսաղեմատուն ուր միշտ առ ձեռն նախագահներ ու պատրիարքներ կը գտնուին: Քիչ վերջ կուգայ Սիմոն եպիսկոպոս, լսիկ մեջիկ, կամացուկ անտոնածայն քաշելով, կարծես բոկոտն է: Ժողովականը միահամուռ ոտքի կը կանգնին: Խոր լուծիւն — միայն Հալաճեան Բարսեղ էֆէնտի սրտի բաբախումները կը լսուին — եւ մինչ երեսփոխանը կ'սպասեն օրհնութեան, արդէն վերջացած է: ա՛յնքան անլսելի ձայնիւ կ'օրհնէ Սիմոն եպիսկոպոս, որ ենթադրել կուտայ թէ խղճահարութիւն մը ունի օրհնելու: Եւ չենք զարմանար: Այսօր հանդիսաւոր կերպով կատարուելիք թատերադրութեան առաջին փորձերուն միթէ ներկայ չէ՞ր:

Մինչ այս մինչ այն, ժամը չորսն անցեր է եւ երեսփոխանաց ունանց հրաժարականները խնդրոյ առարկայ կը լինին: Տըթ. Շիւմանեան էֆէնտի սկզբունք մը առաջ կը դնէ — ով որ երկար ատեն թիֆլիզ կեցած է պէտք է որ միշտ սկզբունքով խօսի — թէ մատուցուած հրաժարական մը մերժելու չէ: Այդ սկզբունքն ընդունելի կը լինի եւ կը գործադրուի: Միայն ձանձմեան Մկրտիչ էֆէնտի հրաժարականն անտես չանցնիր: Նուրեան էֆ. կ'առարկէ թէ ձանձմեան էֆ. անքաղաքավար (?) եղած է: Ինչո՞ւ, վասն զի հրաժարականը պարզ է: Ազգային Ժողովէն կը հրաժարի եւ կը խնդրէ ատենապետ էֆ.էն որ հաճի զայն հաղորդել Ժողովոյն: Այս է հրաժարականը: Քաղաքավար լինելու համար ձանձմեան էֆ. պարտաւոր էր սապէս բան մը գրել: «Ազգային պատկանելի Ժողովը որ մի քանի տարի առաջ բարեհաճած էր վաւերացնել Օրթագիւղի պատուարժան թաղեցւոց ընտրութիւնն եւ զիմ ամենախոնարհ նուաստութիւնն ընդունել ի ծոցի իւրում, անտարակոյս ներողամտ պիտի գտնուի երբ իմանայ թէ եւ. եւ. եւ. եւ.» չորս երես մանր տաւերով հրաժարական մը, ահա՛ քաղաքավարութեան պայմանը: Օրթագիւղի երեսփոխանը ապա չած են թէ ի՞նչպէս կարելի է ձանձմեան էֆ.ն, որ ամենէն աւելի Օրթագիւղի է, անքաղաքավար անուանել եւ պատրաստուած էին բողոքել այդ lèse-Ortakeuynօրին դէմ եւ ո՞վ գիտէ ուր պիտի յանդէր կուին երբ ատենապետ էֆ. «Օրակարգին անցնիլը» նուիրական բանաձեւն արտասանեց եւ կարճ կապեց:

Ատենապետ էֆ. դեռ «Օրա. . .» բառն աւարտած չէ եւ ահա խօսք կ'ուզէ Գուրգէն էֆ. Եւ կ'սկսի խօսիլ այնքան ծանր, այնքան հանդիսաւոր է որքան են դժոխաց երեք դատաւորը Մենոս, Էկուքոս, Հատամազան: Այնպիսի դիրքով կայնած է որ կարծես թէ գաւառացին ճիշդ իրեն համար ըսած է. «Մարդն ալ քեզի պէս պէտք է լինի»: Կը կընէ ամէն մէկ խօսքն: Ամէն անգամ որ պիտի յիշատակէ Յարութիւն Պատրիարքն իւր Երուսաղեմայ պատրիարք, նորա անունը կ'արտասանէ ըսելով. «Նորին Սրբազնութիւն Սրբոյն Սաղմայ Սրբոց Յակովբեանց Առաքելական աթոռոյ արժանընտիր Պատրիարք Ամենապատիւ Տէր Տէր Յարութիւն

Սրբազան արքեպիսկոպոս Ահապետեան»: Եւ Նուրեան էֆ. պայծառափայլ դիմեց, արեւը բացած կ'ըսէ. «Ահա՛ մարդն, այսպէս քաղաքավար ոճով խօսելու է Ազգային Ժողովոյ մը մէջ»: Գուրգէն էֆ. Սուրբ Երուսաղեմ չըսեր, այլ Սուրբ Սաղմ, վասն զի յունարանութեամբ Սուրբ Երուսաղեմ չլինիր: Մի քանի անգամ Կոստանդնուպոլսոյ կ'ըսէ Ա'ին վրայ չեղտելով: Մի անգամ «այս կ'ըսեմ» կ'արտասանէ, այլ անմիջապէս հը հը հը դողալով եւ սարսափահար «զայս կ'ըսեմ» կ'ուզէ եւ կը խնդրէ դիւանադպիւրներէն այդպէս արձանագրել: Կը խօսի յետոյ Ֆրանսայի — զոր ինք գաղղիական կ'ըսէ, միշտ չեղտելով «գաղղիական» բառը — խորհրդարանին վրայ: Կ'ըսէ թէ՛ անդ խնդիրները ցանկով կը լուծուին (?) եւ թէ ինքն այնպէս ընել տայ պիտի Ազգ. Ժողովոյ եւս: Գուրգէն էֆ. օտար ազգէ օրինակներ կը բերէ ցոյց տալու համար թէ ի զուր են իրեն դէմ խօսուածներն, եւ թէ ինքն եւրոպական բաներ ալ գիտէ: Սակայն ամէն սնու պարծութիւն ու թէ կանուխ իւր սլաութիւնը կը կրէ: Նուրեան էֆ. պահ մը հաւատաց թէ Գուրգէն էֆ. Ֆրանսերէն գիտէ ու ստի մի ըիջ վերջ ըսաւ «Գուրգէն էֆ. յիշողութիւնը զսփոփեալ համար . . .»: Յիշողութիւնը զովացնել, միթէ Գուրգէն էֆ. կըրնա՞ր գիտնալ թէ Ֆրանսերէն rafraichir la mémoire բացատրութիւն մը կայ, ոչ. եւ միամտաբար կարծեց թէ իւր (Գուրգէն էֆ.ի) յիշողութիւնը զովացնելու համար Նուրեան էֆ. պիտի դիմէ այն պաղ քաշին զոր խենդերու համար կ'ընեն եւ որովհետեւ . . . ու ահաբեկ ժողովարանէն դուրս կ'ուզէր ցատկել ըսոյց քղանցքէն քաշելով թոյլ չտուին:

Եւ այս ամէնուն եզրակացութիւնը: Գուրգէն էֆ. կ'ուզէր ըսել թէ ամէն օրինաց հակառակ էր որ ատենապետաց դիւանին ինքնաբերաբար զբաղէր Պատրիարքի հրաժարականի խնդրով: Հետեւաբար ներկայացուած տեղեկագիրը պէտք չէ նկատողութեան տանուել — Իրաւունք ունի զըժ-բաղդարար: Բայց այլ է իրաւունք ունենալ այլ է զայն կարենալ գործադրել: Ատենապետ էֆ.ն յիշեցնելով թէ իրեն եւ իրեն ներուն արդարացումը տեղեկագրին մէջն է, զայն կարգալու կ'ենէ: Խեղճ երեսփոխանը կը կարծեն թէ ստուգիւ այդ տեղեկագրին մէջ ատենապետաց դիւանը պիտի արդարացնէ ինքզինք, ուստի մտիկ կ'ընեն: Եւ Մէրեթ-գուլի էֆ. կը յայտարարէ:

Ս. Պատրիարք Հայրը փետր. 20 թուականաւ յլած էր առ ԽՍ հրաժարագիր մը, զոր ըստ օրինի (!) ենթարկեցի ատենապետաց դիւանին նկատողութեան: Աւասիկ այդ հրաժարագիր. «ՄԵՆԱՊԱՏԻ ԵՐԵՄՓՈՒՍՆՔ ՀԱՅՈՅ ԹՈՒՐԻՔԻՈՅ»: Ինչպէս կը տեսնուի Մէրեթ-գուլի էֆ.ն «Մեծապատիւ երեսփոխանը Հայոց Թուրքիոյ» ըսելով կ'ըմբռնէ իւր մեծապատուութիւնը: Մէրեթ-գուլի էֆ. իւր ծագումը փոխանակ Ազգային ըսելու եթէ Վէրսայլէն ըսէր աւելի կը մտնեար ճշմարտութեան: Պաւլոսներու արիւն կը կրէ երակացը մէջ ոչ թէ Գոլշենց: Տարակոյս չկայ թէ իւր նախապապը Լուդովիկոս Ժ' էր որ կ'ըսէր. «Պատուութիւնն ես եմ»: Ազնուական արիւնը չի ստեր: Մէրեթ-գուլի էֆ. կ'ըսէ. «Հայոց երեսփոխանական Ժողովն ես եմ»:

Ինչ եւ է, տեղեկագիրը կը կարգացուի Պատրիարքը պարզապէս հրաժարական կուտայ հիւանդութեան, ծերութեան սլատ-ճառաւ, եւ ատենապետաց դիւանը կ'եղ-

բակացնէ թէ՛ զըզմալի է որ Ն. Բարձրու-
թիւնն պահ մի եւս չարունակէ մնալ և
«Պոլսոյ պատրիարքական Աթոռոյն վրայ եւ
«Իւր անձանձիր հոգածութեամբ յիշատակեալ
«Նէ՛» ըստ փառաբանաց ազգին՝ նաեւ այն
«Բնորոշներ որք դեռ եւս հետամտութեան
«Կը կարօտին» Ա՛յ պիտի գոռայ այդ տե-
ղեկագիր ընթերցման դէմ :

Ե՛ւ Սաւուղ, Ե՛ւ Սաւուղ

Եւ կ'ենէ՛ Պուլիուրեան էֆէնտի. Գարունը
կեանք տուած է նմա, կարմիր կարմիր այ-
տերն առողջութիւն կը բուրեն. կարճ ըզ-
գեստ մը հագած է նման կանանց ձեւերին,
որով ազատօրէն պիտի շարժէ իւր պերճա-
խօսական ոտքերն ու ձեռքերը. պերճաբո-
ւոյնքը բարակ բարակ ոլորած վեր առած,
Ֆէսը մի քիչ ըզլնտի, ակնոցները սրբա-
փայլ, բոց աչքերէն հուր կը ցայտեն, կը
խօսի եւ

Գնան յերեսաց նորա քրտմունք
յոսկերս արանց ամենայն :

«Անկցի՛ դիկտատորն», ահա՛ իւր առաջին,
միջին, վերջին խօսքը :

Բայց մինչ քաջամարտիկ տրիբունը մէկ
կողմէն կ'աշխատի տապալել դիկտատորն
—եւ զուցէ Նիւթօթինը զրկել— միւս կողմէ
կուրծքը Նուրեանի հարուածոց առաջ կը
բանայ. Այլ Նուրեան էֆէնտի խոհեմ է :
Պէտք է թողուլ Պուլիուրեանն, անդին ա-
ւելի վտանգ կայ եւ իբր ճարպիկ ռազ-
մագէտ պէտք է զիմէ բանակին այն
թեւն որ աւելի վտանգի ներքեւ է : Վը-
տանդն այս անգամ ծերունի մ'է : Խօսք ա-
ռած է Տօթթ. Շիշմանեան —զոր իրենցմէ
կարծելով խօսք տուած է ատենապետ
էֆ.— բայց ո՛վ ապրելիւն : Տօթթ. Շիշ-
մանեան էֆ. պարզ կը խօսի «Պատրիարքն
հրաժարական կուտայ, ծեր է, սէտք է
հրաժարական ընդունիլ» Խորին լուռ-
ութեամբ ունկն կը դնեն երեսփոխանք : Տօթթ.
Շիշմանեան էֆ. բաւական կորացած է,
սակայն իւր մագաղաթի նման դէմքն, մու-
րուքն որ ի բոյր խոսակի կարծես դեղնած
է, աչքերն որոյ հուրն ու կրօնը չեն մա-
րած, չեն մեղմացուցած ո՛չ վիշտը, ոչ ժա-
մանակը, խոր տպաւորութիւն մը կ'ընեն.
մանաւանդ խօսքերու պարզութիւնն, «եւ
պարզութիւնն անկեղծիկ զարուծիւնս յա-
յուզ կրթէ» :

Վտանդն աստ է. բայց Նուրեան էֆ.
Տօթթ. Շիշմանեանի հետ իշնալ չուզեր, մի-
այն ըթին տակէն կը մոռնայ :

—Այո՛, այո՛, շատ պարզ է :

Իրաւունք ունի Նուրեան էֆ. այսօր
պարզ խօսքերը, պարզ գրերն հասկնալու
վիճակի մէջ չէ : Մէրէքմ-գուլի էֆ.ի հետ
շատ մնալով բնութենէն բաժին է առեր :
Լաբիւրինթոսական ոճ մը միայն իրենց սի-
րելի է : Ինչ եւ է, վերջին խօսքը պէտք է
մնայ Նուրեան էֆ.ի :

Ոտքի վրայ է Նուրեան էֆ. ամէն ինչ ի նմա
համակրութիւն դրուելու, յարգանք ազդե-
լու բնաւորութիւն ունի. Հասակն արմաւե-
նիի նման՝ եթէ կանգուն է, արմաւենիի նման
նաեւ՝ խոնարհիլ գիտէ : Լաւ կոճկուած է,
սրտէն ոչինչ ցոյց տալու համար կարծես :
Մէկ ձեռքը երկու կոճակի մէջ տեղէն սրտին
վրայ է : Աչքերը բաւական խոր, դէմքն —
երբ զուարթ է— անհամեմատելի կերպով
համակրական, յստակ, մաքուր, ազդու,
պերճախօսական շեշտերով կը խօսի. Ժողո-
վին միակ պերճախօսն է, միակ անձն որ
կարող է Ազգ. Ժողովն իւր ետեւէն ձգել :
Կը խօսի Պատրիարքի հրաժարականին վրայ :
Աւետարանին մէջ ինչպէս Քրիստոս կը յի-

շատակէ Հօր անունը, նոյն սրտաշարժ
ձայնովը կը կրկնէ Նուրեան էֆ. աչքերն
յերկինս յառած «եւ եւ հայր իմ» — Հայրն
Յարութիւն Պատրիարքն է : Կը խօսի կեն-
սական խնդիրներու վրայ, Պատրիարքի հը-
րաժարականը մերժելու հարկին վրայ : Ա-
մէն ինչ լաւ, խօսք, ձեւ, մարմին, պերճա-
խօսութիւն : Բայց մի պատասխան կայ
Նուրեան էֆէնտի. Օր մը, հին Աթէնքի
մէջ, ատենաբան մը բեմէն լաւ ոգանչելի
ատենաբանութիւն մը կ'ընէ, հայրենեաց
չահերը կը պաշտպանէ (Շարունա-
կութիւնը կը զրկենք Յունաց պատմու-
թեանն) :

«Ուրեմն պապագամաւորութիւնն ընտ-
րենք որպէս զի դիմէ Ս. Պատրիարքին եւ
խնդրէ որ հրաժարականն ետ առնու» կ'ը-
սէ ատենապետ էֆ. յափշտակելով մի
քիչ առաջ Մեղիբեան էֆ.ի ըրած առա-
ջարկն : Երեսփոխանք իրարու երես կը
նային. ի՞նչ կ'ըսէ. դեւ չվիճաբանեցանք,
դեւ կարծիք չյայտնեցինք : Ապշելու ալ
ժամանակ չմնար. այսօր արագաշարժ է ա-
տենապետ էֆ.ն եւ պատգամաւորութիւնն
արդէն պատրաստ է : —Երեսփոխանք իրա-
րու կը հարցնեն. այս ի՞նչ անկանոն ըն-
թացք է, ի՞նչ է ատենապետին այս ըրածն :
—Ի՞նչ ըսենք մենք, ի՞նչ դիտողութիւն ը-
նենք : —Ուղարկ հարցուցեր են որ ինչո՞ւ
վիզը ծուռ է : —Որտեղս ծուռ չէ որ վիզս
ծուռ չըլլայ, պատասխաներ է : —Մեր ա-
տենապետին ալ ո՛ր ըրածը ծուռ չէ, որ
այս ծուռ չըլլայ :

Պատգամաւորութիւնը կը կազմեն Բնա-
կանաբար նախ Սիմոն Եպիսկոպոս. Եկեղե-
ցական կոյր հնազանդութեան շնորհիւ Ե-
ղիշէ Այվազեան եւ Արշալույսի վարդա-
պետք. Մկրեան տէր Հայր, Նուրեան էֆ.ի
եկեղեցական թիկնապաշտ. Քրիստոստուր
էֆ. Ղազարոսեան, զի ոչ գիտէ վինչ գոր-
ծէ. Հալաճեան Բարսեղ էֆ. որոյ միակ իղձն
է խնդիրը շուտ լմնայ եւ Երուսաղեմայ
վրայ ատենաբանէ. Մանուկ էֆ. Այլանեան
որ մասնաւոր պատճառ մը չունի այսօր իւր
մակնուեն արդարացնելու. Մէրէքմնուր-
եանգուլի էֆէնտիքը քմիքով : Պատգա-
մաւորութիւնը կը մեկնի :

Պէտք է խոստովանիլ որ Երուսաղեմա-
տան մէջ ոչ ոք յանկարծակիի կուգայ : Ար-
դէն բարապետը պատուհաններէն կ'սպա-
սէին : Առաւօտուն Ժողովէն առաջ Երու-
սաղեմատուն այցելողները տեսած էին թէ
ինչպէս բաղը մաքրուած է, ինչպէս խաչ-
վէի եւ անուշի Խալիֆէքը պատրաստուած
էին : Մառայները կ'ըսէին, Այսօր պատգա-
մաւորութիւն պիտի գայ Ազգ. Ժողովէն :
—Երանի Երուսաղեմատան ծառայներուն
որ ամենէս առաջ դիտեն ինչ որ կը դառ-
նայ ատենապետաց դիւանի եւ Երուսա-
ղեմատան միջեւ :

Իսկ ասդին Ազգ. Ժողովոյ մէջ թերա-
հաւատներ կան : Պատրիարքը պիտի մերժէ
հրաժարն եւ պինդ պիտի մնայ հրաժարա-
կանին վրայ : Ո՞չ ապագէն ըսած է թէ ինքն
այնպէս մարդ չէ (Ներսէսին ակնարկելով),
անգամ մը որ հրաժարական կուտայ ալ ետ
չառնուր : —Բայց ահա պատգամաւորու-
թիւնը կը վերադառնայ : Ի՞նչ չուտ : Ի՞նչ
պատասխանեց. —Երախտագէտ մնաց Ազ-
գային Ժողովոյ եւ հրաժարականն ետ ա-
ռաւ : Ի՞նչ ըսենք : Ազգային առածը կ'ըսէ.
«մեծ պատառ կեր, մեծ խօսք մի՛ ընէր» :
Երբորդ անդամն է այս որ Յարութիւն
Պատրիարք հրաժարականը ետ կ'առնու :

Բայց մեր կարծեօք այս անգամ մեղա-
ւորն ինքն է : Պատրիարքն Եֆէմէիէ եղած է :

Անշուշտ գիտէք Եֆէմէիէի օրէնքներն : Օրի-
նակի համար Նուրեան էֆ. կարող է Եֆէ-
մէիէ ընել Պատրիարքն եւ նորա ըսել. Յա-
րութիւն Պատրիարք, տեղէդ պիտ' ելնես,
սանդուղներէն վար պիտի իջնես, դուռը
պիտի բանաս, դուրս պիտի ելնես, Պատ-
րիարքարան պիտի մտնես, սենեակը պիտի
երթաս եւ Պատրիարք պիտի լինիս : Եւ
Պատրիարքն, առանց գիտակցութեան, պար-
զապէս Եֆէմէիէի օրինաց համեմատ հպատա-
կած է Նուրեան էֆ.ի առանց իւր կողմանէ
ո՛ր եւ է տրամադրութեան հրաժարականն
ետ առնուլ : Իսկ անոնք որ Եֆէմէիէի վրայ
աւելի տեղեկութիւն կ'ուզեն, կը զրկենք
Երուսաղեմայի էֆ.ի յօդուածներուն Արե-
ւելի մէջ :

Ուրեմն հանդարտեցաւ Ազգային Ժո-
ղովն, Հալաճեան էֆէնտի սրտին բարա-
խումբները կը դադրին, բեմը կ'ենէ եւ կը
կարդայ իւր խոկմունքներն, Երուսաղեմայ
վրայ : Պէտք է խոստովանիլ որ լաւ խորհ-
ուած եւ լաւ գրուած են. նմա կը յաջորդէ
Աղաբեգեան էֆ. որոյ մասնագիտութիւնն
եւ փորձառութիւնը կ'արժեն որ յոյժ կա-
րեւորութիւն ընծայուի նորա արտայայ-
տած կարծիքներուն :

Ուրեմն ցտեսութիւն. Ե՛րբ :

—Երբն Ստուծոյ է եւ Մէրէքմ-գուլի
էֆէնտի :

ՀՐԱՋՈՒՆ

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ «ՄԱՍԻՍ»Ի

ՄՈՍԿՈՒԱ, 18 Ապրիլ

Նախորդ նամակնիս վերջացուցինք ըսե-
լով թէ կը թողունք Օտեսան եւ կը մտնենք
երկաթուղին : Այն առաջին եւ վերջին կա-
յանն որի ըով կը վերջանայ երկաթուղոյ
գիծն եւ որտեղ կ'ամբարի երկաթուղոյ
հեռագրալուրերի ահագին սլաքատ մը, ե-
րեւակայեցէ՛ք այնչափ հոյակապ, գեղա-
կերտ եւ հարուստ գոյքերով, որի նմանը
Բերայի հոյակապ շէնքերի մէջ հաղուսագիւտ
է : Երեք ընդարձակ մասերի բաժնուած է,
1⁰ Ա. եւ Բ. կարգի հիւրանոց կամ ճաշա-
րան, 2⁰ Գ. կարգի հիւրանոց կամ ճաշա-
րան եւ 3⁰ պաշտօնական այլ եւ այլ սեն-
եակներ : Ճանապարհորդների ստուարաթիւ
բաղմունքները զանգակի մէկ ձայնին վրայ
խոյն կ'անհետանայ չղճելուքի սենեակ-
ների (վակոն) մէջ : Եւ չղճելուքը կը սողայ
անվրէպ զուգահեռական գծին վրայէն :
Երեք օր միակերպ ճանապարհորդելէ ետք,
կը հասնինք Մոսկուա՝ սլաքականների պատ-
մական մեծ քաղաքն, եւ համալսարանա-
կանների օրը : Մեր ետեւ կը թողունք Վո-
րոժայ, Կարսը եւ Քիէֆ մեծ քաղաքները :
Քիէֆ (պատմական մասն Մոսկուայի պատ-
մութեան հետ կը հրատարակենք յարմար
առթիւ մը) կը պահէ ցարդ մէկ երկու տուն
հայ, որոց եկեղեցին խաճ են Ռուսը : Սա-
հարայի նման ընդարձակ դաշտավայրերն,
ուր ո՛չ լեռներ եւ ո՛չ նոյն իսկ սուառա-
ծի մը կուոր կը հանդիպին անցորդի աչքին,
ցանցառ այլ մեծ եւ փոքր անտառներ, խիտ
առ խիտ դիւղեր, տեղ տեղ փտակներ եւ
աղբերակներ Օտեսայի եւ Մոսկուայի ըն-
դարձակ կամ անհուն միջավայրը կը զար-
դարեն : Յրաւութեան աստիճանն հետզհետէ
Մոսկուայի մօտենալով կը հասնի մինչեւ
+ 1⁰ կամ 2⁰ (սէօմիւս) : Պատեհ առթի
թողով Մոսկուայի նկարագրական մասն
իւր պատմական եւ աւանդական հարստու-
թիւններով եւ յիշատակարաններով, կ'անց-
նինք ուրիշ նիւթի :

Լ. Հայրիկի յանձնարարագրին մեծ արժեք կ'ընծայէ Մեծ. Պ. Գրիգոր Խալաթեանց եւ հիւր կ'ընդունի զիս ապրիլ 7-ի իրիկունէն ի վեր:

Պ. Գրիգոր Խալաթեանց այն գիտուն եւ տաղանդաւոր անձնաւորութիւններէն է, որը մեծ փայլ կը վայելեն Մոսկուայի եւ ռուսա-տաճկահայաստանի մէջ: Իբրեւ գիտուն եւ լեզուագէտ՝ մեծ հեղինակութիւն ունի իրեն նմանների կաճառին մէջ: Քանի մը երկասիրութիւններ ունի ռուսերէն եւ հայերէն գրուած, որոց մէջ զըլ-խաւոր տեղ կը բռնէ Ղազար Փարպեցեոյ մասին պատմական եւ գրական քննութիւնն: Այժմ ռուսացապետութեան պաշտօն կը վարէ Լազարեան ճեմարանի մէջ՝ նշանաւոր հայ գիտնական Պ. Էմինին յաջորդելով: Հայկական հին սովորոյթների, խաղերի, նախապաշարութիւնների, աւանդութիւնների, ասութիւնների, բանաստեղծութիւնների, երգերի, հէքեաթների, առածների, գաւառաբարբառների, հին նշանագրերի եւ ահագին ամբար մը պատրաստեր է (որոց հոգեով եւ մարմնով նուիրուած է) եւ մօտ օրէն պիտի հրատարակէ ընդարձակ ծրագիր մը ընդարձակ ներածութեամբ՝ վերաբերութեամբ հայ ազգագրութեան նիւթերի հաւաքման: Պ. Գրիգոր Խալաթեանց երկտասարդ է եւ միջակ հասակի մը ամեն վայելչութիւնները կը վայելէ: Իւր կրակոտ աչքերը մէկ հարուածով կը հրաւառեն ամենէն ազուլ նայուածքներն անգամ: Ստէպ կը խնդայ — ինչ խնդուն արտայայտութիւններ ունի միշտ — Առոյգ այտեր ունի, որոց վրայ երեւցող անկեղծ ժպիտներն՝ հրապուրիչ երեւոյթ մը կ'ընծայեն միշտ իւր սիրուն եւ պարզ բնաւորութեան: Յաճախ անմեղ կատակներ կ'ընէ, եւ այսպիսով կը դրդէ իւր խօսակիցն առաջ բերելու մի որ եւ իցէ դադարաւոր այլ եւ այլ առթիւ: Իւր սպիտակագոյն սեւախառն դէմքն ճշմարիտ հայի մը տիպարը կ'արտայայտէ: Այս ամեն հաղուադիւտ ձերբերին հետ կը փայլեցնէ նա իւր մէջ նաեւ աշուստ արտայայտութիւն մը՝ որի նմանը չափ դըժուար է գտնել ի Պոլիս:

Դառնալով յանձնարարագրոց, ամենուս սիրելի Հայրիկին աղերսարկու նամակները նիւթայէս ո՞րչափ քննասած են ռուսահայ բարեբաններն, այլ բարոյապէս ո՞րչափ համակրութեան արժանացած: Անմոռանալի են միշտ Աղայ Յովնանէն Յովնանեան եւ Աղայ Մկրտիչ Սանասարեան, ազգային մեծանուն բարեբաններ:

Եւ այս անգամ, եւ այս իւր բարեգործութեան գուցէ 1000րդ անգամ, Աղայ Յովնանէն Յովնանեան ռուսահայ ծերունաւոր բարեբարը բարեհաճեցաւ իրիմեանի համակրալից յանձնարարագրին վրայ ընդունիլ զիս իբրեւ իւր ան, եւ զրկել ի Զուլիգերիա Մանկավարժութիւնն ռուսումնասիրելու: Աղայ Յովնանեան՝ որի անգուգական բարեմասնութիւնները զըրուատելու արժանիք չունիմ, յանձին կը կրէ ազգային հայրենասէր եւ հրապարակաբարի մը մեծ համբաւն, որի կենդանի օրինակներն են Տիգրիսի մէջ երկար տարիներէ ի վեր հաստատած Մարիամեան-Յովնանեան Ուսումնարանն, եւ երկու մշտական սանունը Լազարեան ճեմարանին մէջ: Մարիամեան-Յովնանեան Ուսումնարանի կտակը վերջերս լրագիրներին մէջ հրատարակուելով ծանօթ է ընթերցողներին:

Աղայ Յովնանեան՝ այնչափ շատ պատրաստուած էր այն բարեբարութեան իմ մասին, որ այն բողբէին՝ յօրում նմա կը ներ-

կայէր զիս Պ. Գրիգոր Խալաթեանց՝ գիտասիրական տարօրինակ նայուածք մը ձգեց վրաս, եւ այնչափ շատ համակրեցաւ Ս. Հայրիկին, նորա սրտին եւ հոգեւոյն, որ այսպէս խօսեց. — «Հայրիկ շատ պատուական մարդ է, ո՞րչափ ցանկանում եմ տեսնել մէյ մը զինքն: Գուցէ այս տարի Պոլիսն երթամ եւ տեսնեմ: Ենթադրեալ եմ Հայրիկէն, անոր առաջարկութիւնը կ'ընդունիմ: Ես անհատապէս համոզուած եմ թէ կըրթութիւնը բարոյապէս եւ նիւթապէս կը վերածնէ զմեզ, ուսումը լոյս է, տգիտութիւնը խաւար: Ճշմարիտ գործն այն է, զոր Աստուած կը տնօրինէ (*): Այս գործն Աստուած կանխաւ տնօրինեց էր, ուստի ես չէի կրնար չկատարել: Իսկ ինձ դառնալով ըստ. — Բարեբաժարութեամբ կ'ընդունիմ զձեզ իբրեւ իմ Սան, աշխատէ հաստորիմ կենալ կոչմանը, ջանա օգտակար դառնալ հայրենեաց (Վան), որի հոգին տակ թագնուած լինին գուցէ նախնեացս ոսկերութիւնը: Իմ մոռնար երախտագիտական յատուկ պարտականութեամբ մը արդարացնել այն գովելի պահանջն՝ որի իրագործումը կ'սպասէ ընդէն ըր բարեբարն:

Աղա Յովնանեան այնչափ զգածուած տղաւորութեան ներքեւ ուղղեց ինձ այս պերճախօս եւ կտրուկ խօսքերն, որին հաւիւր կրցայ նուիրել փոխադարձաբար իմ անխախտ ուխտն՝ նոյնպէս զգածուած տղաւորութեան մը ներքեւ:

Մարիամեան-Յովնանեան Ուսումնարանի կտակագիրը խմբագրուած լինելով մօտ օրէն Կաթողիկոսին պիտի զրկուի, որ պիտի ներկայէ Պետրոսբուրգի Լուսաւորութեան նախարարին եւ Զարին ի վաւերացումն: Կարեւոր ակնթաց մէջ շատ կը խօսուի այն տխրադիմ լուրի մասին, թէ Ռուսաց Լուսաւորութեան նախարարն որոշած է հայ ուսումնարանների մէջէն վերցնել Հայաստանի աշխարհագրութեան եւ պատմութեան դասերն:

Երեք հայ ուսանողներ Մոսկուայի Կայսերական Համալսարանին, որոցմէ երկուքն այս տարի իրենց ընթացքը պիտի աւարտեն, կը պատրաստուին դիտական ճանապարհորդութիւն մը ընել ի Հայաստան: Ասոնց անուններն են, Պ. Պ. Յովհաննէս Յովհաննիսեանց, Մատթէոս Մուրատեանց եւ Տիգրան Նաւասարդեանց (ուսանող ի Բարիկ):

Յաջորդ յօգուածով կը խոստանամ գրել ի մէջ այլոց այն գիտնա-գրականական երկոյթի մասին, որը տեղի ունեցաւ իմ առթիւ Պ. Գրիգոր Խալաթեանցի տունն, եւ յորում լեզուաքննական կենդանի հարցումներ եղան ինձ — իբրեւ կենդանի օրինակի — Վասպուրականի ընդհ. գաւառաբարբառի, կարգ մը նմանաձայն տառերի հնչման, Ողորդների ծածկալեզուին (իրենց արկութեանն) եւ քանի մը գաւառական բառերի — խըլըսուն, այլաճկալ, տէլըւայ, ահանջ, պոծաւ եւ մասին:

Ս. ՅՈՎՆԱՆԵԱՆ

Կը հրաւիրուին Արգոյ հեղինակը, Թարգմանիչը եւ հրատարակիչը որ հրատարակելի գործեր ունին թէ՛ հայերէն եւ թէ՛ օտար լեզուաւ, դիմել Լրագրոյս գրասենեակն ուր յանձն կ'առնուի տպագրել տալ յոյժ գոհացուցիչ պայմաններով:

(*) Այս բառն արտասանեց նախ պարսկերէն լեզուով. — Բարեբ էն էսթ քի խօստ պէ սաղէտ:

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Պ. Բադալատ Մերմանեան ձեռնարկած է ի Թիֆլիս հրատարակել «Ժողովրդական Գրողարան» անուամբ փոքր տետրակներ. որոց չորսը լոյս տեսած են արդէն: Երրորդ տետրը կը խօսի Էջմիածնի վրայ, ուսկից կը քաղենք հետաքրքրական տեղեկութիւններ:

... Վերջապէս Գէորգ Գ. Կաթողիկոսը սկսեց հոգալ սոյն տաճարի բարեշքութեան վերայ: Ամենից առաջ ուշ գործնելով ըզգեստների եւ սրբութիւնների պահպանի խիստ փոքր եւ նեղ դրութեան վերայ, ուր բոլոր բաները դիզած էին խառնիխառն, շինեց 1868-79 ին տաճար քարերով նոր ընդարձակ եւ դեղեցիկ պահարան երեք բաժանմունքով: Այս պահարանը կից է տաճարի արեւելեան պատին եւ հին երկու պահարանին, որը գտնվում է եկեղեցու մէջ Սազ սեղանի աջ եւ ձախ կողմը եւ որոց դռները նոյնպէս մեծացրեց Կաթողիկոսը: Հարաւային կողմի հին փոքր պահարանը այժմ է մուտք դէպի նոր պահարանը, որոյ առաջին մասնում գեղեցիկ ընկուզեայ մեծադիր գործոցների մէջ պահվում են տաճարի գործարարի զգեստները եւ այլ բաները: Այստեղ Գէորգ Կաթողիկոսը կանգնեցրեց փոքր սեղան յանուն Ս. Գէորգ զօրավարի, զնելով եւ եօրա մեծադիր օծած սլառները: Պահարանի այս մասնի բանալին գտնվում է տաճարի աւագ լուսարարի ձեռքին: Պահարանի երկրորդ մասնում, որը զարդարած է գեղեցիկ սպիտակագորգ զգոցներով, պահվում են Հայոց ազգի ամենախաղաղ բարեթիւնները — Ս. Գեղարդը, Կենաց Փայտի մասնիկները եւ: Այստեղից մտնում են Պահարանի երկրորդ մասի մէջ, ուր պահվում են եկեղեցու բոլոր հնութիւնները: Երկրորդ մասն ունի երկաթի դռներ եւ բանալին Կաթողիկոսի նոր կանոնով պիտի գտնվի միշտ Էջմիածնի Սինօքի աւագ անդամի մօտ, իսկ երրորդ մասնի դռան բանալին անպատճառ Կաթողիկոսի մօտ:

Նոր պահարանի երկրորդ եւ երրորդ մասներում մտնելու ժամանակ ներկայումս զմայլելի տեսարան, ուր ընկուզի ապակազարդ գեղեցիկաչէն զգոցներում զետեղուած են մեծ բարեկարգութեամբ այլ եւ այլ սրբութիւնները, Կաթողիկոսական եւ եպիսկոպոսական զգեստները, թագերը, գաւազանները, ամենայն տեսակ սրբազան անօթները, պատկերները, հնագոյն դրամները, ականակուռ խաչերը եւ այլն:

Ս. Էջմիածնի տաճարը ունի այժմ 35 պատուհան միջակ դրութեամբ, սոցանից 12 զետեղուած են զլուսուր կաթուղիկէի չորս կողմը, 9 արեւմտեան, 6 հարաւային, 7 հիւսիսային եւ 1 արեւելեան պատերում: Այս լուսավորումներից շատերը վաղ ժամանակից շարած էին եւ փակած երկուղի պատճառով, բայց Մատթէոս Կաթողիկոսի հրամանով 1860 թ. բացուեցան նորա, որով ոչ միայն բաւական լուսաւորուեցաւ մութ եկեղեցին, այլ եւ բաւականաչափ հեռացաւ սաստիկ խոնաւութիւնը:

Այս տաճարը ունի երեք դուռն: Գըլ խաւոր դուռը գտնվում է արեւմտեան պատի մէջ մեծ զանգակատան տակը, միւս երկուսը, աւելի փոքր ուսանողից, գտնվում են հիւսիսային եւ հարաւային պատերում: Բացի սրանից, հարաւային պատում դուռն կողմից պարզ երեւում է շարած դռան տեղը, որով, ինչպէս ասում է աւան-

դուրսիցն, ման էին գալի միայն կաթ ողի-
կոսները եւ թագաւորները ու նոցա ըն-
տանիքը:

Եկեղեցում առաջ կար հոգեւորական-
ներին կանգնելու համար միայն մի դաս
Աւագ սեղանի տոջեւ, իսկ յետոյ Եզրի-
ապար Կաթողիկոսը՝ սեղան կանգնեցնելով իջ-
ման տեղի վրայ՝ շինեց կամ որոշեց նաեւ
երկրորդ դաս, դնելով մի հոյակապ աթոռ
եւ շինելով տաշած քարերից ոչ-բարձր պատ՝
հիւսիսային պատից դէպի հարաւային պա-
տը, որը մնումէ մինչեւ այժմ: Իսկ առա-
ջին դասը որովհետեւ չունէր ոչինչ բա-
ժանմունք, ուստի Գէորգ Գ. Կաթողիկոսը
շինեց գեղեցիկ եւ եւրոպական ճաշակով
ձուլած երկաթի վանդակ, որը նոյնպէս
ընթանումէ հիւսիսային պատից դէպի հա-
րաւային եւ ունի երեք անցք երկրեղկեան
դռներով, մինը մէջտեղում եւ միւս եր-
կուսը պատերի մօտ:

Տաճարը ունի այժմ եօթը սեղան Ս.
պատարագը մատուցանելու համար: Ամե-
նահինը որը շինել է ինքն Ս. Գրիգոր Լու-
սաւորիչը եւ կոչվումէ Աւագ սեղան, եւ
որը յետոյ նորոգել է մի քանի անգամ,
գտանվումէ տաճարի արեւելեան պատի
գմբէթաձեւ կամարի տակ: Սա աւելի մեծ
է եւ ընդ արձակ միւս սեղաններից եւ բարձր
է գետնից (յատակից) երկու արշինաչափ,
ունենալով երկու կողմից հինգ հինգ աստի-
ճան կամ ոտք: Բեմի երեսի կողմը շինած է
սպիտակ մարմարից սրի վերայ նկարած են
12 առաքեալները, նոցա երկու կողմից եր-
կու սարկաւազունք Ստեփաննոս նախալը-
կան եւ Փիլիպպոսը, իսկ մէջ տեղում Աստու-
ածածինը Մանուկը ձեռքին: Այս սե-
ղանը իւր հիմնարկութեան օրից հաստա-
տած է յանուն Ս. Աստուածածնի եւ սորա
տօնը կատարվումէ Վերափոխման նախըն-
թաց շաբաթ օրը: Սորա խաչկալը ուղար-
կուած է Զմիւռնիայից Աստուածատուր
Կաթողիկոսի ժամանակ 1721 թ. այդ խաչ-
կալը շինած է փայտից, համարեա՝ բոլորո-
վին ոսկեզօծած է եւ շատ գեղեցիկ է, ու-
նի երկու գուռն:

Աւագ սեղանի աջ եւ ձախ կողմում
կան երկու սեղան, ձախակողմեանը յանուն
երկու եղբայր Յակովբ եւ Յովնանէս ա-
ռաքեալների (Որդ. ոց Որոտման), իսկ աջա-
կողմեանը յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի:
Այս երկու սեղանը կանգնացրել է Բ. Սե-
րազամ Կաթողիկոսը 1730-34 թ. ականին:
Ոոցա վերայ առաջ կային փայտաշէն գեղե-
ցիկ խորաններ նոյն Արաքսամ Կաթողիկո-
սից շինած, բայց յետոյ հնացած լինելու
պատճառով վերցնել տուեց Մատթէոս Կա-
թողիկոսը 1861 թ. եւ նոցա փոխանակ
դնել տուեց այլ խորաններ նոյնպէս փայ-
տաշէն եւ շատ գեղեցիկ այժմեան ճաշակով:

Հարաւային պատի գմբէթաձեւ կամարի
տակ կայ սեղան յանուն Յովնանու Մկրտչի
փոքրիկ քարաշէն կաթողիկէով՝ չորս սիւնի
վրայ հաստատած: Այս սեղանի վրայ սովո-
րաբար պահվումէ ապակազարդ գործի մէջ
միջակ կաթսան Ս. Միւռնոսով: Եպիսկո-
պոսի ձեռնադրութեան ժամանակ այստեղ
շարուած են լինում զգեստաւորած եպիս-
կոպոսները (հին) եւ այլ հոգեւորականները,
ներկայացնելով եկեղեցական եօթը դասը,
այն է երկու քահանայ, երկու սարկաւագ,
երկու կիսասարկաւագ, երկու ջահնկալ,
երկու գպիւր եւ երկու դռնապան համա-
պատշաճ զգեստներով, վերջապէս երկու
իշխան եւ երկու աղբատ, իրրեւ վիաներ
նոր եպիսկոպոսի արժանաւորութեանց եւ
նորս վիճակի ժողովրդի համաձայնութեան

եւ հաճութեան: Տաճարի հիւսիսային պա-
տի գմբէթաձեւ կամարի տակ նոյնպէս կայ
սեղան յանուն Ս. Ստեփաննոս Նախալկայի
փոքր քարաշէն կաթողիկէով՝ չորս բարակ
սիւնների վերայ: Այս սեղանի բեմը ունի եօթն
աստիճան (ոտն) ըստ եկեղեցական եօթն
դասու, իսկ պատերի վերայ նկարուած են
12 եպիսկոպոսներ զգեստաւորված: այդ նը-
կարների տակը երկու կողմից կան քարի
նստարաններ իւրաքանչիւր վեց հոգու հա-
մար, ուր նստումեն եպիսկոպոսի ձեռնա-
դրութեան ժամանակ զգեստաւորուած ե-
պիսկոպոսները: իսկ ինքն Հայրապետն բազ-
մումէ բեմի մէջ տեղը դրած գահի վերայ
եւ լուսմէ վիաների վիայու թիւնները նորն-
ծայի արժանաւորութեանց մասին եւ ե-
պիսկոպոսացուի բերանից բարձրաձայն դա-
ւանութիւնը հաւատի ըստ Հայաստանեայց
եկեղեցու: իսկ ձեռնադրութիւնը, ինչպէս
եւ կաթողիկոսների օծումն եւ Ս. Միւ-
ռնի օրհնութիւնը կատարվումեն միշտ Ա-
ւագ սեղանի վերայ: Ս. Ստեփաննոս նա-
խալկայի եւ Ս. Յովհանէս Կարապետի սե-
ղանները շինուած են միայն 1684 թ. Ե-
վթազար Կաթողիկոսի կարգադրութեամբ:

Տաճարի կեդրոնաւորում, մեծ կաթու-
ղիկէի տակը, բարձրանումէ փոքրիկ եւ շատ
գեղեցիկ սեղան այն իսկ տեղի վերայ, ուր
Միւռնի Որդին, ըստ Ս. Գրիգոր Լուսաւորչի
հրաշալի տեսեան, իջանելով երկրի վերայ
զարկեց ոսկի ուռով եւ որը այդ պատճա-
ռով սկզբից ի վեր միշտ կոչվումէր Իջման-
Տեղի: Այստեղ առաջ չը կար սեղան, այլ
միայն մի փոքր ինչ գետնից բարձր բար
գերեզմանի տապանաքարի պէս, որը միշտ
ծածկած էր լինում թանկագին դիպակնե-
րով, ինչպէս վկայումէ Առաքել պատմա-
գիրը:

Առաջ Եզրիազար Կաթողիկոսը սեղան
շինեց այստեղի վերայ փոքր կոնաձեւ կա-
թողիկէով չորս բարակ սիւնների վերայ: Յուսոյ
Աստուածատուր Կաթողիկոսը բոլորովին
վերանորոգեց այդ սեղանը 1720 թ. նա
կանգնացրեց չորս մարմարեայ բարակ սիւ-
ների վերայ գեղեցիկ մարմարեայ կաթու-
ղիկէ վայելուչ նկարներով զարդարած, իսկ
յատակը ծածկեց թխագոյն մարմարով: Ար-
քազամ Բ. Կաթողիկոսը 1732 թ. չըջապա-
տեց այս սեղանը գեղեցիկ դեղին պղնձի
վանդակով որը ունի հարաւային եւ արեւ-
մուտեան կողմից երկու փոքր դռնակներ:

Վերջապէս եօթներորդ սեղանը յանուն
Գարրիէլ եւ Միքայէլ հրեշտակապետաց
գտանվումէ արեւմտեան մեծ գանգակա-
տան երկրորդ յարկում: այս սեղանի վերայ
առաջ մատուցանվումէր Ս. Պատարագը իշ-
եալ հրեշտակապետների տօնին եւ Համ-
բարձման օրը:

Այժմ Ս. Պատարագը մատուցանվումէ
սովորաբար Աւագ սեղանի վերայ, բաւա-
կանին յաճախ Իջման-Տեղի սեղանի վերայ,
իսկ միւս սեղանների վերայ նոցա տարե-
կան տօների ժամանակ:

Ներսի կողմից տաճարի բոլոր պատերը,
կամարները եւ սիւնները զարդարուած են
նկարներով շին եւ Նոր կտակարանի պատ-
մութիւնների բովանդակութեամբ, այլ եւ
Ս. առաքեալների սրբերի եւ Հայոց մի քա-
նի Ս. հայրապետների պատկերներով, որը
նկարուած են կտակ վերայ եւ յետոյ մա-
ծուցված են պատերի վերայ առանց չըջա-
նակների: Խոնաւութիւնից նկարները վը-
նասվել են, մանաւանդ կամարների վերայ,
եւ շատ տեղ թափել է և թափվումէ գածը:

Տաճարին տալիս են առանձին իմն շքե-
ղութիւն երկու հայրապետական աթոռնե-

րը: Սոցանից մինը ընկուղի փայտից շինած
շատ գեղեցիկ եւ բազմահմուտ քանդակնե-
րով՝ կանգնած է հիւսիսային-արեւմտեան
մեծ սիւնի առջեւ Իջման-Տեղից մօտիկ: Սա
ունի գմբէթ հինգ փոքրիկ կաթողիկէնե-
րով թէպէտ Իջմանի վանքում մնացել էր
աւանդութիւն թէ այս հայրապետական
գահը ուղարկուած է ընծայ Հոռովից, բայց
չէր յայտնի ոչ ուղարկողի անունը եւ ոչ
ստանալու ժամանակը: Իսկ Զամչեան պատ-
մագիրը ասումէ թէ ուղարկել է այդ Ժ. Բ.
Իննովկէնարոս Պապը Հոռովի իրրեւ ընծայ
Նահապետ Կաթողիկոսին 1697 եւ կամ
1699 թ. Երն:

Երկրորդ աթոռը, նոյնպէս ընկուղի փայ-
տից եւ աւելի ընդարձակ, զարդարած է
մանր սատափներով եւ կրկայի ոսկորների
կտորներով, որը ձեւացնումեն գեղեցիկ
ծաղիկներ եւ սորա բոլորաձեւ գմբէթը
հաստատուած է չորս շատ բարակ սիւնների
վերայ եւ ունի չորս մանրիկ կաթողիկէ-
ներ: Այս աթոռը կանգնած են հիւսիսային
արեւելեան մեծ սիւնի առջեւ Աւագ սե-
ղանից մօտիկ: Սա եւ երկու այլ սորա նը,
ման շինուածքով դռներ, ուղարկել են
Զմիւռնայի բարեօրաշտ Հայերը 1721 թ. Երն:

Ս. Իջմանի տաճարի մէջ, այս բազ-
մադարեան եւ հոգաւոր Մայր Եկեղե-
ցու մէջ, առանձին հոյակապ եւ գեղեցիկ
կերպով զարդարած թանգարանում, որոյ
մասին յիշեցինք իւր ժամանակ, պահպան-
վումեն հետեւեալ սրբութիւնները ընդ հա-
նուր Հայոց ազգի:

1. Ս. գեղարդն որով Ղուենկիանոս հա-
րիւրապետը խոցեց Քրիստոսի կողը խաչի
վերայ:

2. Հրաշագործ պատկեր «Յիսուսի ի-
ջուցանելն ի խաչից», սա փորագրած է փայ-
տի վերայ Ս. Յովհաննէս Աւետարանչի ձեռ-
քով:

3. Կենաց փայտի մասնիկներ:

4. Այլ եւ գազաթ Ս. Թադէոս Առաք-
եալի եւ Հայաստանի առաջին լուսաւորչի:

5. Այլ եւ գազաթ Ս. Թովմա Առաք-
եալի:

6. Ճիւղթ եւ առամ Ս. Պետրոս Առաք-
եալի:

7. Այլ Ս. Մատթէոս Աւետարանչի:

8. Մի պահարանի մէջ գետեղուած մա-
սուրներ — Ս. Յովհաննէս Կարապետի, Ս.
Անդրէաս Առաքեալի, Ս. Մարկոս Աւետա-
րանչի, Ս. Նիկողայոս աքանջեալործի եւ
Ս. Գէորգ զօրավարի:

9. Գազաթ Ս. Հովսիսի մէջ եւ մասունք
Ս. Գայիանէի:

10. Այլ Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ եր-
կու երկաթի քերիչներ եւ այլ գործիքներ
որով շարժարեցին մեծ նահատակը:

11. Այլ Ս. Արիստակէսի, որդւոյ Ս. Գրի-
գոր Լուսաւորչի:

12. Այլ Ս. Յակովբայ Մծրնայ Հայրապե-
տի եւ մի մասնիկ Նոյեան Տապանից, որը
ստացաւ հրեշտակի ձեռքով Արարատի վե-
րայ:

13. Հրաշագործ խաչ գետադարձ Պետ-
րոս Կաթողիկոսի, որով նա յետ դարձրեց
գետը ընթացքը Սեբաստիա քաղաքում ջուր
օրհնէքի ժամանակ Յունվարի 6 ին 1017
թ. Երն:

Կան այստեղ եւ այլ շատ մասունքներ,
որը պահվումեն արժաթի ոսկի տուփերի,
աջերի եւ խաչերի մէջ զարդարած թան-
կագին քարերով:

Հայոց հին պատմագիրները Իջմանի տա-
ճարին տալիս են հետեւեալ անունները.
Շոպալի-Աստուածաշին, Կաթողիկէ-Եկեղեցի,

Մայր-եկեղեցի, Մայր Աթոռ, (առաջին ամբողջ վանքի վերաբերմամբ), իսկ վերջին ժամանակները ընդհանրապես կոչվում է Ս. Եջմիածին:

Իսկ ինչ վերաբերվում է այն խորին տըպաւորութեան, որը գլխում է սիրտը մտնելով այս բազմադարեան տաճարը, դուք է աւելի ծանրակշիռ եւ ազդու նշանակութիւն կ'ունենան օտարազգի ճանապարհորդների վերկայութիւնները, յորոց մինը ասում է այսպէս:

«Բարեպաշտ ջերմեռանդութեան զգացմամբ լցվում է հոգին, երբ մտնում ես հնագույն սրբարանը Ս. Գրիգորի, բարձր բայց մեայլ, լուսաւորուած կաթողիկէի տաճան եւ երկու նեղ լուսամուտներով եւ միջին սեղանի միակ կանթեղով: Այդ սեղանը կանգնած է չորս սիւների մէջ տեղը, որոց վերայ հաստատած է կաթողիկէն, եւ սիրտը յակամայ ձգտում է եւ մղում է դէպի պատուանդանը դորա, ուր Հայաստանի լուսաւորչին երեւցաւ սքանչելի տեսիլ եւ որտեղից արդարեւ իբրեւ լուսափայլ Շողակաթից հոսեց եւ տարածուեցաւ հոգեւոր լուսաւորութիւնը ամբողջ (Հայոց) երկրի վերայ: Այդպիսի տեղերը, որք ուղեւորած են նահատակների քրտնախառն աղօթքներով եւ արտասուքով, առանձին իմն կերպով ներգործում են հոգու վերայ եւ լինում են աւելի հաստատ հիմունք իւրեանց վերայ կառուցած տաճարների, քան թէ մարդկային բոլոր հարստութիւնները: Այստեղ աղօթում էր Ս. Գրիգորը, եւ ահա այստեղ, յետ տաճան եւ հինգ դարու զինի նորա, դարձեալ դալիս են աղօթելու եւ մատուցանելու անարիւն պատարագը, չնայելով ժամանակների եւ ազգերի մրրկների վերայ, որք տեւրիչ եւ կործանիչ կերպով անցան այս Ս. տաճարի եւ նախաթոռն մեծ նաստանի մօտից: Զերմեռանդութիւնը առաւել եւս կը մեծանայ եթէ յիշենք աւանդութիւնը թէ՛ Միածին Որդւոյ Սեղանը կանգնած է առջին սեղանի տեղի վերայ, ուր մատուց առաջին գոհութեան պատարագը նախահայրն Նոյ մարդկային ցեղի փրկութեան համար իւր ընտանիքի միջնորդութեամբ: Այն ժամանակ կը բացատրուի նոյն իսկ տեսիլը մեծին Գրիգորի թէ՛ ինչո՞ւ Միածին Որդին Աստուծոյ յատկապէս այդ տեղը ցոյց տուեց նորան մատուցանելու համար նորա անարիւն պատարագի այն տեղ, ուր մատուցուեցաւ Նոյեան յորինական պատարագը: Այսպէս է՝ Հայաստան Մուրավիէի:

ԳԻՒՂԱՅԻ ՍՕՐ ՍԸ ԳԱՆԳԱՏ

ՊԱՆԴՈՒԹՅԱՆ ԶԱՆԿԱՆԵՐՈՒՆ

(ԳԱՆԱՌԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ)

Մեանեմ Բեգի Սուրբ Լուսնակ,
Ինչի՞ Էտալիս դու միմակ,
Տրտում աչքով իրիշն(4),
Սեւ ամպի տակ կը բաշտես:

Լուսնակ, լուսնակ Բե դուրպան
Իմ տարտին արա տէրման:

Ջոջ ցաւ ունիմ Բեգ տանս.
Ղարիպ ունիմ չեմ տեսնս:

(1) Նայիս:

Էսա քամամ եօր տարի,
Իմ աղէկներ կորուցի:
Ո՛չ բուղր կուգայ ո՛չ խապար,
Իմ խոցին է չը կայ ցար:

Լուսնակ, լուսնակ Բե դուրպան
Իմ տարտին արա տէրման:

Անտէր անտուն փողոցներ
Շրջիմ, փարսեմ(2) չոր խացեր,
Քամին ու փուխ գիւ ծեծեն
Աչքիս արտունկ կը քալեն,

Լուսնակ, լուսնակ Բե դուրպան
Իմ տարտին արա տէրման:

Այս, իմ սրտիկը սեւ է,
Աստիօրիս(3) լոյս խաւեր է,
Քանի որ դարիս մի տեսնեմ,
Տղեկացս դարդով կը մծրեմ(4):

Լուսնակ, լուսնակ Բե դուրպան
Իմ տարտին արա տէրման:

Էն ի՞նչ սեւ օր սեւ տարի
Օր մեմ եղան խեղճ գրի,
Կտրին աղէքս ցարխասս
Քսան տարու քաւ ու քաւ(5):

Լուսնակ, լուսնակ Բե դուրպան
Իմ տարտին արա տէրման:

Թողին տուն տեղ աւառ ու ալի
Գումշ գութան խառք տալի
Ղարիպ աշխարհ ցեաւացան
Իրենց վօրան մոռացան:

Լուսնակ, լուսնակ Բե դուրպան
Իմ տարտին արա տէրման:

Դուշման դայնդար(6) քար սիրտ էր,
Էն էլ չըլտ(7) գէն կ'ուզէր,
Իր սրտի մէջ միշտ կ'աւեր
Խաջօյի տուն ծի խաւեր:

Լուսնակ, լուսնակ Բե դուրպան
Իմ տարտին արա տէրման:

Մեր մալ ու մուլ բմեն աւառ,
Մեզի տկոզ դուրս աւառ,
Աստուածն ի վերն էլ տեսաւ
Մեր արտունկ օր քալիս:

Լուսնակ, լուսնակ Բե դուրպան
Իմ տարտին արա տէրման:

Մեր երկիրն է շէն ու լէն
Մեր գեղն անուն Մուշաղշէն,
Խաղար ցանեմ ու քաղեմ
Մեզի բաժին հինգ չունենեմ:

Լուսնակ, լուսնակ Բե դուրպան
Իմ տարտին արա տէրման:

Թէրմաշ մենք էն օրիկ
Օր ես ինկայ աստիօրիկ,
Մէրիկ եղայ ես օրոյց
Սրտիկս բուսաւ դարա ու խոց:

Լուսնակ, լուսնակ Բե դուրպան,
Իմ դարտին արա դարման:

Օր մը՝ 1885ի Յունիսի վերջերն էր երբ պատահեցանք ի Սուրբ Գիւղ գեղջուկ հայ կին մ'որոյ վրձակն իսկապէս համապատասխան էր այս երգի նպատակին:

(2) Մուրամ. (3) Աշխարհ կամ կեանք. (4) Այս-բեւ, փողանալ. (5) Նորաւոր երիտասարդ. (6) Վաշխառու. (7) Արդէն:

այնքան յուզմամբ ու ցաւօք կ'երգէր զայն իր յատուկ եղանակաւ որ մեր սիրտը շարժեց ու նորա բառերի հետ եղանակելու ներդաշնակութիւնն ամենախոր տպաւորութիւն մ'ազդեց մեզ: Մենք արդէն զգածեալ՝ սկսանք ուշադրութեամբ մը տրիլ ընել: Ամեն անգամ երբ ուշաբերեմ սորա սէն մի բառը, կը պատկերի յիշողութեանս այդ պարագայն պանդխտութեան եւ թշուառութեան դառնութիւնները կը պատկերէր, որոց ծանրութիւնն պանդխտ մը միայն կրնայ զգալ:

Ղ, Պ, ՆԱԶԱՊԵՏԵԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ (8)

ԱՍՏՂԱԳԵՏԸ

ԺԲ.

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԶԱՆԱԶԻՒՄԻ ՄՕՏ. ՆՈՅՍ. ԱԶԱՏՈՒԻԼԸ ՊԱՇԱՐՈՒՄԷ:

Զուհուդ իւր թանկագին աւարի հետ ձիավարեցին ամբողջ մի օր առանց հանգըստանալու: Վերջապէս զգալով սաստիկ յոգնութիւն եւ այլ եւս չտեսնելով իրենց ետեւէն հետամուտ եղողները, կանգ առին:

Սալիհան օր ի սկզբան շատ վախցած էր, ուրախացաւ երբ լսեց ծանօթ ձայնի հընչիւններն որք այնքան մօտիկ էին իւր սրտին: Հասկնալով կատարուած անցքինը պատակն՝ ամբողջ ճանապարհին նա կը նայէր Զուհուդի վրայ աչքերով որք սքանչուած էին հոգեկան բերկրութեամբ եւ չէր կարողանար բաւականաչափ սնունդ տալ իւր հրճուանաց: Երբ նոյն կանգ առին, Սալիհայի հարցումները չափ չուէին: Անդադար կը զրկէր ամուսինը, կը սեղմէր սրտին վրայ, կ'աշխատէր արտայայտել սըրտին բոլոր բորբոքը, բոլոր սէրը, բոլոր տանջանքները զորո կրած էր իրենց անջատման միջոցին: Զուհուդ նոյնպէս կը գտնուէր մի այնպիսի հիացման մէջ որ խօսք չէր գտներ արտայայտելու իւր ուրախութիւնը: Փոփոխ խոսքեր կը ծառայէին նոյն անկողնի տեղ, իսկ միլիոնաւոր աստղերն այդ շքեղ կերպով տիպուած էին կապոյտ երկնակամարի վրայ, կը լուսաւորէին զնոսա:

Երկրորդ աւուր երեկոյեան պահուն, Զուհուդ տեսաւ իւր առջեւ մի խումբ զինեալ մարդիկ, որք ինչպէս կ'երեւէր, կը հանգստանային, որովհետեւ նոցա ձիանը կ'արածէին նոցա շուրջն: Երկուստարդն հետաքրքրութիւն ունեցաւ զիտնալ թէ ո՞րք էին նոցա եւ հրամայեց իւր նոքարներէն միոյն երթալ տեղեկանալ: Երբ նա վերադարձաւ Զուհուդ իմացաւ օր նոյն իւր մարդիկն էին, զորո ինքն առաջուց ճանապարհ գրած էր, որ երթային Զանախէ: Զորմացաւ թէ ի՞նչ արդէն կրնար պատճառ լինիլ որ նոցա այդքան ժամանակ մը նան այդ տեղ, եւ իսկոյն մօտեցաւ, սկըսաւ պատճառն հարցնել այն նոքարին որոյ յանձնած էր իւր խումբի գլխաւորութիւնը:

— Դուք ձեզ յայտնի չէ, իշխան, պատասխանեց նա, որ Խումայի բոլոր մելիքներն աստատմեցան մեր դէմ, եւ թալիշները քարքելով ձեր հօրեղոր զօրքերն արդէն պաշարած են Զանախէին: Զհամարձակեցանք առանց ձեզ առաջ դնալ եւ վճռեցինք սպանել ձեր վերադարձին:

—Հո՛, այդ շատ կանուխ են սկսած...
Ես այդ չէի սպասեր... Ես ասէի թէ նա-
միներու թիւը:

—Մօտ երեք հազար:

—Այդ ոչինչ. կը ջանամ շուտ ծանո-
թանալ թաղիկներու հետ... նոյն իսկ
այս գիշեր պէտք է յարձակինք թշնամիներու
վրայ եւ Չանախին ազատենք պաշա-
րումէ:

Ջուլիուզ խորհուրդ տուաւ. Սալիհային
հազուիւ էրիկ մարդու ձեռով եւ յարձա-
կում գործելու միջոցին չբաժնուիլ իրմէն:
Ժամանակը կը նպաստէր քաջ երիտասարդի
գիտաւորութեան: Երկինք ծածկուեցաւ
մէջով, որոնք կ'որոտար եւ կայծակը կը
կտրէր միմիւր ամպերն: Ամէն ինչ ցոյց կու
տար որ գիշերը փոթորկային կը լինի եւ
խառնուի Ջուլիուզ բաժնեց իւր խումբն ե-
րեք մասի, հրամայելով իւրաքանչիւր մա-
սին հարուածել թշնամին միմեանց հակա-
ռակ կողմերէ: Որպէս զի խառնուի մէջ գի-
րար ճանաչեն, նոքա իւր նշանաբան ընտ-
րեցին ՍԱԼԻԻՆՍ անունը:

Գիշերը վրայ հասաւ: Սաստիկ անձրեւն
հեղեղի նման կը թափուէր ամպերէն: Ա-
նձրեւատ սրտման միջոցին կայծակի փայ-
լատակումները կը հետեւէին միմեանց շան-
թահար երկինքը կարծես թէ վառուած էր
կրակի մէջ: Կամաց, առանց ազմուկի, Ջուլի-
ուզի խումբն առաջ կ'ընթանար: Անձրե-
ւի ձայնը կը խլացնէր անոնց քայլերու խըշ-
խըշոցը: Նոքա կ'ընթանային հետիւտն,
ձիանն իրենք ետեւէն քաշելով: Չանախի
բերդին խիստ մերձ հեռաւորութեան վրայ
նոքա տեսան թշնամիներու մի խումբ որ
զետեղուած էր տաղաւարներու մէջ: Տա-
ղաւարներն հիստուած էին ծաւերու ճիւ-
ղիւրէ: Եղանակի գէշութիւնն ստիպած էր
զնոսա ծածկուիլ այդ ժամանակաւոր բնա-
կարաններու մէջ: Միայն տեղ տեղ կը տես-
նուէին սրահապաններ ոյք ոտքի վրայ էին,
եւ որոնք անձրեւէն պահպանուելու հա-
մար իրենց փափախները վար էին իջեցու-
ցած մինչեւ իրենց ականջներն եւ կը նա-
յէին դէպ ի հակառակ կողմը:

Ջուլիուզ այդ ամէնը կարողանալով նըշ-
մարել ի լոյս կայծակին որ կը փայլատակէր
անդադար, նշանացի իմաց տուաւ նստիլ
ձիերուն վրայ: Նորա հրամանը կատարեցաւ
այնքան հանգարտութեամբ որ անկարելի
էր լսել մինչեւ իսկ ամենափոքր շարժման
ձայն մ'իսկ: Հարիւր մարդ գիմեց դէպ ի
գիւղի կողմը, միւս հարիւրը գիմեց դէպ ի
բերդի հիւսիսային կողմն, իսկ Ջուլիուզ
անցնելով մնացածներու գլուխն ընտրեց ի-
րեն համար գործի կեդրոնը: Մի ակնթար-
թի մէջ երեք խումբերը միասին սարսափե-
լի աղաղակներով յարձակեցան ընթացիկ
թաղիկներուն(*) վրայ: Արիւնհեղութիւնը
սոսկալի էր: Եփովութիւն եւ իրարանցում
տիրեց թշնամեաց մէջ, Նոքա չհասկնալով
թէ ում հետ գործ ունին, կամ կը յափշտա-
կէին իրենց զէնքերն եւ յարձակելով միմ-
եանց վրայ կը կոտորէին զիրար, կամ վէրք
ստանալով Վարանդացիներու խենթարներէն
ու թրերէն գետին կ'ընային: Այդ միջոցին
կայծակը, կարծես թէ կամենալով նպաս-
տել Ջուլիուզի յաջողութեան, փայլատա-
կեց մի տաղաւարի վրայ եւ այրեց զայն:
Որոտման զարհուրելի պայթիւնը զղրդեց
ամբողջ շրջակայքն եւ լեռներու խորքէն
հազարաւոր բռնիւններ վերադարձուցին
նոցա արձագանքը: Կրակն արագութեամբ

տարածեցաւ բոլոր տաղաւարներու մէջ եւ
հրդեհի լուսաւորութեամբ Վարանդացիք,
զերդ գիշատիչ գազան, կը կոտորէին իրենց
թշնամիները:

Թաղիկի մեկիւրի որդին Յուսէինն որ հը-
րամանատարն էր բերդը պաշարողներուն,
ի գործ դրաւ բոլոր հնարաւոր միջոցներն
որպէս զի կարողանայ հաւաքել իւր զին-
ւորներն եւ գիմադրել յարձակողաց, բայց
ի զուր անցան նորա ջանքերը: Վերջապէս
յաջողեցաւ միացնել հինգ հարիւր հոգի ոյք
կը գտնուէին անդադարաւ եւ անկարգ
վիճակի մէջ: Յուսէին յայտնեց նոցա թէ
թշնամոյն թիւը շատ փոքր է եւ թէ չա-
փազանց ամօթալի կը լինէր խոյս տալ մի
բուռն գայելէ, կորսնցնելով այն բոլոր օ-
գուտները զորս ձեռք էին բերած այնքան
թանգ գնով: Իւր յորդորները կարգաւոր
հանդերձ թաղիկներու հրամանատարը
թուրը կը շարժէր եւ իւր հրամանաց ան-
հնազանդներն ոտքերուն ներքեւ կը ձգէր:
Մեկը Յուսէին այսպէս կարող եղաւ հա-
ւաքել իւր զօրքերու մնացորդը, մի կողմ
տարաւ գանձը որպէս զի ժամանակ ու-
նենայ կարգի բերելու: Վարանդացիք այլ
եւս չտեսնելով թշնամիները, վազեցին ա-
ւարի առին թաղիկներու բանակն որ
արդէն մոխիր էր դարձած: Յանկարծ նո-
ցա ետեւէն լսելի եղաւ խառնածայն աղա-
ղակ: Մեկը Յուսէինն իւր մարդերով յար-
ձակեցաւ Ջուլիուզի զօրախմբի վրայ եւ
զայն պաշարեց չորս կողմէն: Կոխը նորո-
գեցաւ այժմ աւելի յամառութեամբ:

Յուսէին պատառելով թշնամոյ խումբը
մօտեցաւ Ջուլիուզին եւ երկուքին մէջ ըս-
կընեց սաստիկ մենամարտ մը: Ջուլիուզ
աղաւտեցաւ շնորհիւ իւր զրահին եւ սաղա-
ւարտին, իսկ Յուսէինն իւր անբաղդատելի
ճարպիկութեան: Ջուլիուզ կը խնայէր
Յուսէինին իսկ Յուսէինն ամենեւին չէր մոտ-
ձէր խնայել Ջուլիուզը: Սորա մանկահա-
սակ կինը չբաժնուելով ամուսնոյն քովէն
կը կուէր զարմանալի քաջութեամբ: Յան-
կարծ Ջուլիուզ իւր նօսրը սաստիկ արա-
գութեամբ դարձնելու միջոցին ասպան-
դակները կտրեցան եւ ինքը զլխիվայր ին-
կաւ դետին վրայ: Յուսէին շտապեց օգուտ
բաղել այդ գէպէն եւ կը պատրաստուէր
իջեցնել իւր մահաբեր սուրը սուխի գլխին,
բայց Ջուլիուզի պահապան հրեշտակը
կանգնած էր այնտեղ: Մանկահասակ Սա-
լիհան մի ակնթարթի մէջ կորցեց թուրն
Յուսէինի ձեռքէն եւ երկրորդ հարուա-
ծով զնա գետին գլորեց: Թաղիկիք տես-
նելով իրենց հրամանատարն ինկած՝ նոյն
րոպէին ցրուեցան, եւ օրշաղիսի առաջին
ճառագայթներն ուղղուեցին Վարանդացի-
ներու յաղթութիւնը: Չանախի բերդն ա-
զատեցաւ թշնամոյն պաշարումէն:

Պաշարուածներն ամբողջ գիշերն ան-
ցուցին բերդին պարիսպներուն վրայ չկա-
րողանալով հասկնալ թէ ո՞րք էին արդեօք
նոր յարձակում գործողները, կամ թէ ի՞նչ
կը կատարուէր բերդին շուրջը: Գամբի չըզ-
լովոցն, անձրեւի ազմուկն, որոտի սննդիկ
զղրդիւնը, թոյլ չէին տար նոցա լսել մի
բան: Պաշարուողները վախնալով թէ գուցէ
իրենց սխալով մատնեն Չանախին թշնամ-
ւոյն ձեռքը, չհամարձակեցան բերդէն դուրս
ելնել եւ մինչեւ առաւօտ նորա մէջ փակ-
ուած մնացին:

ԺԳ.

ԳԱՂՏՆԻՔԸ ԿԸ ՅԱՅՏՆՈՒԻ

Վարանդայի իշխանն իւր պարիսպնե-
րէն մեծ ուրախութեամբ տեսաւ Ջուլիուզն
որ յաղթական փառքով իւր խումբի հետ
կը մօտենար շարժական կամուրջին: Հօրեղ-
բայր եւ եղբորորդի ցնծութեան բացա-
գանչութիւններով վազեցին եւ միմեանց
գիրկն ինկան: Հոգեզայլութեան առաջին
րոպէն երբ անցաւ, մեկիւրն ըսաւ.

—Հազար անգամ գոհութիւն կը մատու-
ցանեմ Ամենակարողին, որ քեզ, իմ սիրելի
Ջուլիուզս, եւ ոչ ուրախին պարտական եմ
իմ թշնամիներէ ազատուիլ: Դու չահեցար
մի նոր իրաւունք երախտագիտութիւնս
գրաւելու: Բայց ո՞վ է այդ գեղեցիկագէտ
երիտասարդն որ կանգնած է քու մօտ:

—Դա իմ փրկիչն է, հօրեղբայր, եթէ
դա չլինէր, դուք այլ եւս զիս չէիք տես-
ներ:

—Ի՞նչպէս:

Ջուլիուզ պատմեց կուռոյն վերջին
դէպքն եւ Վարանդայի մեկիւրն հիացմամբ
գրկեց Սալիհան եւ համբուրեց զայն ըսե-
լով.

—Սիրելի երիտասարդ, ինձ մատուցած
ծառայութիւնդ այնքան անգնահատելի է
որ ամէն վարձատրութիւններէ վեր է: Պա-
հանջէ՛ ինձմէ ինչ որ կ'ուզես: Եթէ քու
պահանջածդ լինի իմ իշխանութեան ներ-
քեւ, կ'երդնում քեզ իմ օրով որ դու ան-
պատճառ կ'ստանաս զայն:

Այդ խօսքերու միջոցին, Ջուլիուզ բըռ-
նեց Սալիհայի ձեռքէն, երկուքն ալ ծունկ
չաքեցան մեկիւրի առջեւ:

—Մենք կը խնդրենք ձեր ներումն, հօ-
րեղբայր, դա մեզ համար աւելի թանկա-
ղին է քան ամէն տեսակ պարգեւներ:

—Ներում... ձեր երկուքի՞դ... այդ
ինչ կը նշանակէ, չեմ հասկնար:

—Սյդ երիտասարդն, հօրեղբայր, այդ
երիտասարդն...:

—Ասա՛, շուտ, մի տանջեր զիս:

—Այդ երիտասարդն... իմ կինն է:

—Քո կինն է նա...:

—Մահաւատկանուհի է...:

—Ի՞նչպէս, դու ամուսնացած մահմէ-
տական աղքատ հետ... Տէր Աստուած,
այդ ի՞նչպէս կարելի է:

Սալիհան զուարթ կերպով միջամտեց.

—Համարեա թէ ես արդէն քրիստոնեայ
եմ: Իմ ամուսինս ինձ պատմեց բոլորն, ինչ
որ կը վերաբերի ձեր կրօնին: Ես կը սիրեմ
քրիստոնեայներն եւ պատրաստ եմ քրիստոնե-
այ լինիլ: Ես կը ցանկանայի եւ մկրտութիւն
ընդունիլ. դուք այնքան բարի էք եւ նե-
րողամիտ որ պիտի օգնէք անշուշտ ինձ
կատարելու իմ բաղձաւը:

Սալիհայի խոստովանութեան մէջ այն-
քան անկեղծութիւն կար որ Վարանդայի
իշխանը բոլորովին հիացած մնաց նորա
խօսքերէն: Վերադառնալով Ջուլիուզն ու նո-
րա կինը, գրկեց երկուքն ալ ըսելով.

—Երջանիկ եղիք, զաւակներս, այսու-
հետեւ ինձ կը մնայ օրախանալ տեսնելով
ձեր երջանկութիւնն:

Որպիսի հրճուանքով Ջուլիուզ եւ Սա-
լիհա լսեցին այդ խօսքերն, որոնց մէջ կը
բովանդակուէր նոցա ապագայ երջանկու-
թիւնն եւ լաւ ապագայի յոյսը:

Միւս օրն հրաւիրեցաւ մի քահանայ, որ
կատարեց Սալիհայի Մկրտութեան սուրբ
խորհուրդն, իսկ երրորդ օրը նա ամուսնա-
ցաւ Ջուլիուզի հետ օրինաւոր պսակով,
քրիստոնէական սուրբ կրօնի ծէսերու հա-
մեմատ:

(*) Յայտնի է թէ սոքա եւս Հայեր էին:

ԵԼՄՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՌՈՒՄԻՈՑ

Ռուսիոյ ելեւմտից նախարարութեան պաշտօնական թերթը վերջերս հրատարակած է կայսրութեան ընդհանուր վաճառականութեան վերջին հնգամեայ հաշուեկշիռն, որմէ կ'երեւի թէ Ռուսիոյ արտածումն 1882ին աւելի եղած է քան ներմուծումն 71,173,000 ռուբլով . 1883ին՝ 94,578,000 ռուբլով, 1884ին՝ 64,176,000 ռուբլով, 1885ին՝ 116,115,000 ռուբլով, 1886ին՝ 55,616,000 ռուբլով: Այս վերջին կէտը կ'ապացուցանէ որ անցեալ տարի ռուսական վաճառականութիւնն ամենամեծ հարուած է կրած արտածման մասին, ըստ որում 1885ին մինչդեռ Ռուսիա ունեցած է 116,150,000 ռուբլի, ընդհակառակն 86ին ներմուծած է եւ ոչ իսկ այդ գումարի կէսն՝ այսինքն՝ 55,616,000 ռուբլի:

Գարձեալ ելեւմտից նախարարութեան պաշտօնական թերթի հաշուեցուցակի վրայ հիմնուելով կը տեսնենք որ Ռուսիոյ ելեւմուտը շատ կրճատուած է 1882էն ի վեր: Այսպէս եւրոպական Ռուսիոյ արտածման եւ ներմուծման համագումարն 1882ին՝ 1,110,273,000 ռուբլի, 1884ին՝ 1,036,839 հազար ռուբլի, 1885ին՝ 877,740,000 ռուբլի, իսկ ն սխընթաց տարի միայն 819,414,000 ռուբլի եղած է: Այսպէս ուրեմն փաստերը կ'ապացուցանեն որ Ռուսիոյ միջազգային առևտրական հաշուեկշիռն չորս տարուան ընթացքի մէջ իւր համագումարի գրեթէ փէ է բարձր կրճատուած է, այսինքն՝ 26 օլով:

Մաքսային արոց մասնախումբի հաշուեցուցակին նայելով վերջին տասն տարիներու մէջ, իւրաքանչիւր տարի, Ռուսիա Եւրոպիոյ վճարած է 32 միլիոն ճարտարարուեստից տուրք . . .

Ռուսիէ կարելիք յիշատակելով այս տեղեկութիւնները կը հարցնէ.

«Ինչո՞ւ: Ի՞նչ պակաս կայ մեզ: Մեր հայրենիքը լի է բնութեան ամեն հարստութեամբ. արդ, ինչո՞ւ վճարեցինք Եւրոպիոյ տարեկան 32 միլիոն: . . . Գործինակ, աշն անսպառ քանակով կը գտնուի մեր երկրի մէջ. Աստորիսանի բոլոր նախնազը ծածկուած է աղով, առանց յիշելու նորա աղային լիճերն, Էլտոն, Բասուկնակ եւ, Ելիցկիի, Բախմուտի ազահանքներն աշխարհիս վրայ չունին իրենց համահաւասարն, բայց այնուամենայնիւ մենք աղի համար Եւրոպիոյ կը հատուցանենք տարեկան 8 միլիոն ռուբլի:

«Մեր երկրի մէջ կան երկաթի եւ թափածու երկաթի ամբողջ լեռներ, որպէս է Ուրալ. սակայն մենք երկաթի եւ թափածու երկաթի համար Եւրոպիոյ կը հատուցանենք տարեկան 47 միլիոն ռուբլի . . .

«Դոնի եւ այլ կողմեր կան անթիւ հանքեր, սակայն մենք ածուխի համար Եւրոպիոյ կը հատուցանենք տարեկան 12 միլիոն . . .

«Ժամանակ է վերջապէս որ հասկնանք թէ մեր երկրի տնտեսական բարօրութիւնը կարող չէ զարգանալ միայն կոյր հովանաւորութեան դրութեամբ:

«Մեր երկրի տնտեսական բարօրութեան կենդանութեան համար ձեռք առնուած են եւ կ'առնուին ուրիշ միջոցներ բոլորովին ներհակ. մինչդեռ դորա համար նախ հարկ աւհրածեալ է մեր ուղը կեդրոնացնել մեր ժողովրդի մտային զարգացման վրայ, ըստ որում մտային բարձր զարգացմամբ եւ գիտութեան շնորհիւ միայն կարող ենք փէր լնել այն անհուն հարստութեան որ թաղուած կը մնայ մեր երկրի բնութեան ծոցին

մէջ. բայց ահամայ թէ կամու ուշ չի դարձուիր ժողովրդի զարգացման գործի վրայ. մեր ժողովրդեան 90 օլո կը գտնուի տա. կաւին զարգացման ոչ թէ ստոր այլ դեռ եւս նախնական աստիճանի վրայ եւ նորա ամեն ինչն պատած է թանձր տղիտութեամբ, որովհետեւ ժողովրդի կրթութեան գործին, որպէս ըսինք, ստորակարգ նշանակութիւն կուտանք եւ նորա համար կը ծախսենք մեր տարեկան ելմուտացոյցի 2 օլով:

«Իսկ այն զարգացեալ երիտասարդութիւնն զոր այսպէս թէ այնպէս կարողացանք կազմել, անգործ թողինք, խլեցինք նորա ձեռքէն գործելու ամեն ասպաւէզ: Դարձուցինք զայն բոլորին անպէտ եւ կոչեցինք զայ կէրէտ աղաք դաս: Բանի որ այսպէս կը վարուինք ժողովրդի կրթութեան հետ, քանի որ այսպէս կը վարուինք եւ նորա կրթեալ դասի հետ եւ զայն եւս անգործ, անպէտ կը դարձնենք, ապա ուրեմն դժուար կարելի է հաւատալ մեր տնտեսական վիճակի բարձրման, նոյն իսկ եթէ ձեռքի տակ պատառ զտնուին բնական հարստութեանց հազարաւոր աղբիւրներ: Եթէ այսպէս վարուինք կրթութեան հետ, դեռ եւս ընդ երկար հարկատու պիտի լի-

նինք Եւրոպիոյ. եւ մենք Եւրոպիոյ ձեռքին շահագործութեան աղբիւր պիտի մնանք նա կը բարձրացնէ, կը ճոխացնէ իւր վաճառականութիւնն, իւր տնտեսական վիճակն, իսկ մերը՝ կը քայքայէ: Մեր արդի վիճակն այնպէս է որ մենք բոլորովին անպէտ կը հանդիսանանք մեր երկրի շահագործութեան նկատմամբ. ցոյց չենք տար ո՛ր եւ է եռանդ. մեզցնել կուտանք մեր պաշտօնէրը եւ կը դարձնենք զմեզ ծոյլ եւ դանդաղ ստրուկներ . . . »

ԻՄԴԸՐՆ ԷՃԷՆՍԻ

Գարաքէոյ, Տէյլիմէն խան, Կ. Պոլիս

Կառաջարկէ մեր գաւառացի ընթերցողաց իրենց հաշույն դանձել իրենց առնել, իքներն եւ իրենց հաշույն վճարել իրենց պարտքերն, ինչպէս եւ իրենց հաղորդել առեւտրական ամեն տեղեկութիւններ եւ իրենց յանձնարարութեան համեմատ ամեն ինչ գնել միջնորդչեքով:

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻՒՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԻՐԱԳՐՈՒ

ՄԼՏԵՍ՝ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ

ԵՐ ԽԵՐՎԵՐԵՆՈՒԹ ԵՐՈՒՄ ԿՆՈՐՈՒՄ
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)



Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը եւ աճումը: Դիտու թեփը շուտ մը անկրկնելի կ'ընէ: Ի՞նչ անուշ հոտը առատ է ու հեշտալի:

«Մէկ շիջ կը բաւէ:» Եւ քիչ փորձը ունեցան ամենքը որոնցմիտքառնած մազերը իրենց բնական գոյնին դարձան, եւ ճաղատ տեղերը մաղով ծածկուեցան:

Ներկ չէ, եւ ամենեւին դեռնի մը չընէ: Թէ որ կուգես թարմ մազ ունենալ եւ բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիջ մը ստացիր քիչէն Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ համաշխարհային մազի նորոգիչը. (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս Բարիզ ու Նիու Եօրք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի դեղագործներու քով:

ՀԵՐՄԵՆԵԿԸՆ ԴԵՐԴԿԵՓՈՒՆԸ

ԳԵՂԵՑԻԿՅՈՒՆՈՒՄ ԵՐՄԵՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԻԷՏ ԴԵՐԴԿԵՓՈՒՄ, ՄԻԷՏ ԹԵՐՄ:



Ընգամուան մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ եւ բազմաթիւ փոշիներէ: Ընգին անգամ գործածելովն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ երեսը, վիզը, թեւերը եւ ձեռուները պիտի առնուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարիտի փայլ, հանդերձ շուշանի եւ վարդի գունով եւ բուրմամբ: Մազոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցունէ: Ընհետ կ'ընէ մորթի սևութը, երեսի եւ ձեռքի ցանքերը, արեւայրուքը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բժաւորութիւն: Եւ այս ամեն բանով անկարելի կ'ընէ մասնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս Բարիզ ու Նիու Եօրք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի դեղագործներու քով:



ԿԵԱՆԲ, ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԱԶՆԵՐՈՒ

ՄԷԼԵՐՈՒ

ՄԼՁԵՐՈՒ ՄԼՁԻ ՀԵՏԻԿ ԿՆՈՐՈՒՄ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ձերմըկած կամ գունաթափ մազերը. Կը դադրեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa lpton Row). Նոյնպէս Բարիզ ու Նիու Եօրք:

Կը գտնուի. Ն եւ Ժ. Գանդիւր եղբայր բրիտանական դեղաբանը, բերա Մեծ փողոց. Իամընտ Գարաուն, Աննգլիական մթերանոց, Եիւքսէր Գալալըրմ. եւ Ի. զիտոր Լազանտէլա 435, բերա Մեծ փողոց: